

**ՀՆԻԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵՉՈՒՆԵՐՈՒՄ**

(Ըստ համեմատական լեզվաբանության նորագույն տվյալների)

ՅՈՒ. Մ. ԳՅԱՐԻԻԼՅԱՆ

Հնդեվրոպական պայթյալական բաղաձայնների տեղաշարժի երևույթը, որը դիտվում է միայն հայերենում և գերմանական լեզուներում, և որի պարզաբանումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն այս լեզուների, այլև նրանց մյուս ցեղակիցների ծագման, զարգացման ու յուրահատկությունների նշագրման գործում, հնդեվրոպաբանության առավել առեղծվածային հարցերից մեկն է: Հարցի բարդությունն այն է, որ հիշյալ երևույթը դիտվում է ցեղակից այնպիսի լեզուներում, որոնք խոսվում են միմյանցից բավականաչափ հեռու գտնվող տարածքներում և ընդհանուր առմամբ ցուցաբերում են հնչյունական ու քերականական մեծ տարբերություններ: Բացի այդ, բաղաձայնների նշված տեղաշարժը դժվար է բացատրվում նաև հնդեվրոպական մյուս լեզուների տվյալներով և հակասականությունն ակնհայտ է: Փորձենք ամփոփ ձևով ներկայացնել հարցի էությունը:

Ավանդական հնդեվրոպաբանությունը, և հատկապես «երիտքերական» լեզվաբանները, վերականգնում են Բ. Ե. պայթյալականների հետևյալ համակարգը.

bh	b	p
dh	d	t
gh	g	k
g ^w h	g ^w	k ^w

Այս համակարգից ելնելով, ցույց է տրվում, որ հայերեն և գերմանական լեզուների պատմական զարգացման ընթացքում տեղի է ունեցել նշված բաղաձայնների կանոնավոր տեղաշարժ (Lautverschiebung), որի հետևանքով Բ. Ե. *bh, *dh, *gh շնչեղ ձայնեղները վերածվել են b, d, g պարզ ձայնեղների, Բ. Ե. *b, *d, *g պարզ ձայնեղները դարձել են p, t, k պարզ խուլեր, իսկ խուլ պայթյալականները կա՛մ պահպանվել են, կա՛մ էլ փոխվել են շնչեղ խուլերի (ph, th, kh) և շփականների (հայերենում՝ ֆ, վ, կամ յ, իսկ գերմաներենում՝ f, b, x-h և այլն): Տեղաշարժի այս երևույթը, որը կոչվում է հնդեվրոպական բաղաձայնների առաջին տեղաշարժ կամ Գրիմի օրենք, գերմանական լեզուների համար առաջին անգամ սահմանել է Յ. Գրիմը², իսկ հայերենի համար վերջնականապես ճշգրտել է Հ. Հյուբշմանը³: Միշտ է, հիշյալ երևույթը հայերենում և գերմանական լեզուներում ներկայանում է որոշ չափով յուրովի, սակայն դրա էությունը երկու լեզուներում էլ նույնն է:

Արդ, հարց է առաջանում, թե ինչո՞վ է պայմանավորված նշված տեղաշարժը և ինչո՞ւ է այն քնորոշ հատկապես հայերենին և գերմանական լեզուներին: Ավանդական հնդեվրոպաբանության մեջ այն բազմապիսի մեկնաբանություններ է ունեցել: Նշենք, որ այն մեկնաբանությունները, որոնք սկզբում տրվում էին միայն գերմաներենի համար, հետագայում վերափոխման ենթարկվեցին, երբ ներգրավվեցին նաև հայերենի փաստերը: Այս դեպքում արդեն խնդիրը ավելի է բարդանում, և եթե միայն գերմաներենի բաղաձայնների տեղաշարժի պատճառը կարելի էր համարել մե՛րթ գերմանական ժողովրդի ազատասեր բնավորությունը (Յ. Գրիմ), մե՛րթ գերմաներենի շեշտի գործողության յուրահատուկ դերը (Չ. Բուր, Վ. Ռյուսեր) և այլ հանգամանքներ, ապա հայերենի տվյալների ներգրավման դեպքում արդեն նման հնարավորությունները բացառվում են, և պահանջվում է երևույթի

¹ Ըստ նորագույն ուսումնասիրությունների՝ նաև խեթալուվիական լեզուներում:

² J. Grimm. Deutsche Grammatik. Göttingen, 1822.

³ H. Hübschmann. Über die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, Leipzig, 1875.

ատավել գիտական ու հիմնավոր վերլուծություն: Ծատ լեզվաբաններ, այդ երևույթից ել-
 ցելով, փորձել են մերձավոր ցեղակցական կապեր տեսնել հայերենի ու գերմանական
 լեզուների միջև (Ա. Ֆիլ, Ն. Հիրտ, Ռ. Ջոլտա և այլն): Ա. Բուգենն նույնիսկ հատուկ
 «ստուգաբանություն» է նվիրել հայերենի և գոթերենի փոխազդեցական կապերի բացա-
 ժայտմանը⁴: Այս հարցը բազմակողմանիորեն քննել է հատկապես Ա. Մելեն: Նրա կար-
 ծիքով, հայերենի և գերմաներենի փաստերի սկզբունքը նույնն է. միայն թե գերմանական
 լեզուների համար վկայված զանազան ենք այդ երևույթի համեմատաբար զարգացած մի փուլ,
 իսկ հայերենը ներկայացնում է դրա սկզբնավորումը միայն: Մինևնույն ժամանակ նա նշում
 է, որ թեև րն, ւն, կ: հնչյունները ընդոչ են հայերենի նախնական վիճակին. «Հայերենի
 և գերմանական լեզուների փաստերի համապատասխանությունը լիակատար է, և մարդ
 շատ է հակվում դրանց ելման կետը թխեցնել հնդեվրոպական ժամանակաշրջանի բար-
 քառային մի նորագոյացումից»⁵: Սակայն ավանդական հնդեվրոպաբանության տվյալներով
 ոչ մի կերպ հնարավոր չէ քացատրել այդ նմանությունը, քանի որ ըստ այդ տվյալների.
 1) հայերենը և գերմաներենը միմյանցից բավական հեռու տարածքներում էին խոսվում
 այն պահին, երբ մեկը և մյուսը երևան են եկել պատմության մեջ: 2) Հայերենն անպայ-
 ման հեռու է տեղափոխվել իր ծագման կենտրոնից և գրավել նախորդ, բոլորովին մի այլ
 լեզվի տեղը: (Մինևնույն ժամանակ հայերի և փյուրգիացիների վերաբերյալ պատմական
 փաստը ըստ տեղաշարժի ոչ մի կերպ չի հաստատվում): 3) Հարևան լեզուներից փոխ
 առնված որոշ բառեր գերմաներենում և հայերենում ենթարկվել են բաղաձայնական տե-
 ղաշարժի, ինչպես օր.⁶ *Volcae «ժողովուրդ»* գալլիական անունը հ. բ. գերմ. ներկայանում
 է *Walch* և անգլ. *wealch* բառերով կամ արքեմեյան **paraidiza-a* հայերենում «պարտեզ»
 (*partéz*)⁶: Այդ պատճառով Մելեն եզրակացնում է, որ բաղաձայնների հիշյալ տեղաշարժը
 հայերենում և գերմանական լեզուներում տեղի է ունեցել միմյանցից անկախ: «Տեղաշարժը,
 հավանաբար, սկսվել է այն ժամանակ, երբ հայերեն ու գերմանական լեզուներ դարձած
 հնդեվրոպական քարքաունիյո յուրազրկել են խոսերը շնչեղացնող և իսկական ձայնեղներ
 չունեցող ազգաբնակչությունների կողմից և դրանից հետո էլ այդ միտումը պահպանվել է
 և այն և՛ նոր արդյունքներ»⁷:

Այսպիսով, պարզ է, որ Մելեն տվյալ երևույթը փորձում է բացատրել լեզվական են-
 թաշերտի ազդեցությամբ: Սակայն ինչպե՞ս քացատրել, որ երկու տարբեր ենթաշերտերի
 (գալլիականը գերմաներենի համար և կովկասյանը՝ հայերենի) ազդեցությունը տարբեր
 լեզուների վրա տվել է նույն արդյունքը: Միշտ է, որոշ լեզվաբաններ, ինչպես նաև ինքը՝
 Մելեն ցույց են տալիս, որ հիշյալ տեղաշարժը այդ երկու լեզուներում այնքան էլ նույնական
 չէ, և, որ դրանք ցուցաբերում են որոշ յուրահատկություններ, սակայն ընդհանուր միտումը
 առկա է, և նկատվող տարբերությունները այնքան էլ էական չեն: Հարկ է նշել, որ
 Ն. Հյուբշմանը սկզբում սահմանելով բաղաձայնների տեղաշարժը հայերենում, արդեն իր
 «Հայերենի քերականության» մեջ կասկածներ է հայտնում այդ երևույթի բուն էության
 վերաբերյալ⁸: Բացի այդ, ավանդական հնդեվրոպաբանության շատ ներկայացուցիչներ
 (Յոհ. Շմիդտ, Ն. Պեդրսեն, Ե. Կուրիլովիչ, Է. Բենվեդստ և այլն), քննելով նշված տե-
 ղաշարժը, ակնհայտ հակասականություն են նկատում հայերենի ու գերմաներենի, մի կող-
 մից, և այլ հնդեվրոպական լեզուների, մյուս կողմից, փաստերի միջև: Ի վերջո այդ կա-
 կածները հանգեցնում են այն տե՛սակետին, որ ավանդական հնդեվրոպաբանության կողմից
 վերականգնված հնդեվրոպական հնչյունական համակարգը իրեն չի արդարացնում և վե-
 րանայման կարիք է զգում: Ասվածը առաջին հերթին վերաբերում է նախնական *b-ի
 առկայությանը, որը, ի տարբերություն մյուսների, շատ հազվադեպ է վկայվում: Թերևս
 այդ է պատճառը, որ Հյուբշմանը «հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի գրաված
 դիրքի մասին» իր նշանավոր հոդվածում քննելով վերոհիշյալ երևույթը, հնդեվրոպական
 պայթյունների շարքում պարզ ձայնեղ *b-ի տեղը բաց է թողնում⁹: Ավելացնենք նաև,
 որ «երիտերականների» կողմից վերականգնված վերը ներկայացված համակարգը չի
 պահպանել և ոչ մի հնդեվրոպական լեզու:

Բննվող երևույթի էությունը նոր մեկնաբանություններ ունեցավ այն բանից հետո, երբ
 հնդեվրոպաբանությունը սկսեց խորամուխ լինել նախաեզվի ժամանակագրության հարցի-

⁴ S. Bugge. Über den Einfluss der armenischen Sprache auf die Cotiche. Indoger-
 manische Forschungen, 5, 1895.

⁵ Ա. Մելեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 51:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 52:

⁸ H. Hübshann. Armenische Grammatik, Bd. I, Leipzig, 1895, S. 407.

⁹ H. Hübschmann. Über die Stellung..., S. 19.

րում և դիմեց նրա նախնական (նախահնդեվրոպական) վիճակի վերականգնմանը: Այս դեպքում վկայակոչվում են ոչ միայն հնդեվրոպական լեզուների առկա փաստերը, այլև կատարվում են զուտ տեսական բնույթի վերականգնումներ՝ երբեմն օգտագործելով նաև ոչ հնդեվրոպական լեզուների տվյալները: Այդպիսով հնդեվրոպաբանությունը սկսում է հաղթահարել սանսկրիտը որպես համեմատության համար չափանիշ ընդունող, դեռևս Փ. Բուպպի կողմից առաջ քաշված, տեսակետը: Մինևույն ժամանակ, վերը նշված հակասականությունների քիչ թե շատ վերացման համար, առաջ է քաշվում տիպաբանական բնույթի այն հարցադրումը, որ եթե աշխարհի բազմաթիվ լեզուների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից ոչ մեկը չունի հնչյունական այնպիսի համակարգ, ուր համապատասխան շնչեղ խուլերի բացակայության դեպքում առկա է պարզ խուլ պայթական-պարզ ձայնեղ պայթական զույգային հակադրությունը, ապա պետք է հնդեվրոպական վիճակին բնորոշ համարվի նաև շնչեղ խուլերի (ph, lh, kh) շարքը: Սակայն այս փոփոխությունը ևս քննվող խնդրի լուսաբանմանը ոչինչ չի տալիս և մինևույն ժամանակ ավելի բարդացնում է այն: Դանիացի լեզվաբան Հ. Պեդերսենը վերանայելով Բ. Ե. պայթականների ավանդական համակարգը, եկավ այն եզրակացության, որ եթե քնական լեզուներում առկա է պայթականների հակադրություն ըստ ձայնեղության և շրթնայինների շարքում կա բացակայող անդամ, ապա բացակայում է ոչ թե b-ն, այլ՝ p-ն: Այսինքն նախահնդեվրոպական վիճակի համար պետք է վերականգնել պայթականների հետևյալ համակարգը.

-	ph	b	
	t	th	d
	k	kh	g ¹⁰

Սակայն այս փոփոխությունից հետո՝ էլ հնդեվրոպական պայթականների հետագա զարգացումը Պեդերսենի կողմից կրկին բերվում է ավանդական համակարգին: Միայն այն տարբերությամբ, որ այս դեպքում նկատի է առնվում ոչ թե ընդհանուր հնդեվրոպական, այլ նախահնդեվրոպական վիճակը, որի հետագա փոփոխությունը հանգեցնում է նախապես ընդունվածին: Չնայած այդ բանին, Հ. Պեդերսենը կարողացավ ցույց տալ, որ նախահնդեվրոպական վիճակի ուսումնասիրությունը բացի արտաքին և ներքին վերականգնման փաստերից անպայման ենթադրում է նաև տիպաբանական տվյալներ: Արդի հնդեվրոպաբանությունը լայնորեն է օգտագործում հիշյալ մեթոդների համակցված գործադրումը: Այդ ձևով, Ա. Մարտինեն, հակադրվելով Պեդերսենի կողմից Բ. Ե. պայթականների համակարգում պարզ խուլերի և պարզ ձայնեղների փոխատեղմանը, այն կարծիքն է հայտնում, որ *d, *g, *g^w շարքը պետք է համարել շրթնային անդամից զուրկ կատկայնացվածների (*t', k', k^w) հետագա զարգացման արդյունք¹¹: Այս դեպքում արդեն հեշտ է բացատրվում *b-ի բացակայությունը Բ. Ե. բաղաձայնական համակարգում, քանի որ շրթնային կատկայնացված հնչյույթի (p') գործնական իրացման հնարավորությունը թույլ է: Բացի այդ, այսպիսի վերականգնման դեպքում, հնարավոր է դառնում նաև լույս սփռել Բ. Ե. լեզուների ծագման ու զարգացման որոշ խնդիրների վրա:

Մարտինեի վերոհիշյալ դրույթը ժամանակակից հնդեվրոպաբանության կողմից հետագա բազմակողմանի զարգացում է ունեցել և այժմ ներկայանում է որպես «կատկայնացվածների տեսություն»: Չնայած այս տեսության վերաբերյալ գոյություն ունեցող իրարամերժ կարծիքներին, կարելի է ասել, որ դրա օգնությամբ հնդեվրոպաբանությունը թևակոխեց մի նոր փուլ, քանի որ արդեն բավականաչափ ձերպով կարելի է ճշգրտված համարել հնդեվրոպացիների նախնական քնակության, ինչպես նաև այդ ժողովուրդների մշակութային հարցերը: Նշենք, որ վերջիններս և հատկապես հնդեվրոպացիների նախահայրենիքի պրոբլեմը, սերտորեն կապված են քննարկվող հարցի հետ: Այդ բանից չէր կարողանում խուսափել նաև ավանդական հնդեվրոպաբանությունը: Վերը նշվեց, որ Ա. Մեյեն բացահայտելով հայերենի և վրացերենի հնչյունական համակարգերի մասնությունները, դրանք համարում է որպես հայերենի վրա հարավ-կովկասյան լեզուների ազդեցության հետևանք: Այս հանգամանքը պետք է որ կասկած հարուցեր հայերենն իր ծագման կենտրոնից այլ տեղ տեղափոխվելու վարկածի նկատմամբ, քանի որ այդպիսի մեծությունը ենթադրում է հայերենի և նշված լեզուների մույն տարածքում գոյակցության շատ ավելի երկարատև շրջան, քան ընդունվում էր: Մյուս կողմից, սակայն, այդ ենթադրությունը կարծես թե հերքվում է, քանի որ կովկասյան լեզուներից (մասնավորապես վրացերենից)

¹⁰ H. Pedersen. Die gemeinindoeuropäischen und vorindoeuropäischen Verschlusslaute. Copenhagen, 1951, S. 10—16.

¹¹ A. Martinet. Evolution des langues et reconstruction. Ventôme, 1975, p. 251—252.

կատարված փոխառությունները հայերենում մեծ թիվ չեն կազմում: Հ. Հյուբշմանը այդ տիպի փոխառությունները նույնիսկ եզակի է համարում և, հետևաբար, բացառում վրացերենի աղբյուրյան հնարավորությունը հայերենի վրա: «Ավելի հավանական է,— գրում է նա,— որ աղվաններից ու վրացիներից ավելի բարձր մշակույթ ունեցող հայերը ավելի շուտ կարող էին քառեր փոխ տալ, քան թե վերցնել»¹²: Միանգամայն համաձայնվելով մեծ հայագետի հետ, նշենք, որ եթե այդ ընդհանուր գույակցության հնարավորությունը համարենք դեռ նախահնդեվրոպական ու նախաարթովելական շրջանը, երբ հայերենը դեռևս «եր անջատվել ընդհանուր հնդեվրոպականից (համապատասխանաբար նաև վրացերենը), ապա վերոհիշյալ հնչյունական նմանությունները այլ մեկնաբանում կստանան:

Արդ, ի՞նչ է տալիս կատկայնացվածների տեսությունը քննարկվող հարցի պարզաբանմանը: Նախ ասենք, որ հիշյալ տեսությունը, միմյանցից անկախ, առաջ են քաշել ամերիկացի լեզվաբան Ռ. Հոպերը և խորհրդային լեզվաբաններ Թ. Գամկրելիձեն ու Վ. Իվանովը: Հենվելով Մարտինեի դրույթի վրա, Հոպերն իր ուսումնասիրություններում ավանդական հ. ե. *b, *d, *g, *gʷ պայթականների փոխարեն առաջարկում է վերականգնել *p', *t', *k', *k'w կատկայնացվածները: Նման վերականգնման համար որպես փաստարկ է բերվում այն հանգամանքը, որ ավանդական պարզ ձայնեղները ցուցաբերում են կատկայնացված պայթականների բազմաթիվ տիպաբանական բնութագրեր, օրինակ՝ դրանք բացակայում են բառակազմական ածանցներում և միևնույն արմատի կազմում չեն կարող գուգակցվել միմյանց հետ: Հոպերը ավանդական *bh, *dh, *gh, *gʷh շնչեղ ձայնեղների փոխարեն առաջարկում է թրթուրներ և երանգավորում ունեցող պայթականներ (murmured stops)¹³: Գամկրելիձեն և Իվանովը, ի տարբերություն Հոպերի, ավանդական պարզ խուլերը ներկայացնում են որպես շնչեղ խուլեր, իսկ շնչեղ ձայնեղները թողնում են անփոփոխ: Ընդ որում, նրանք ընդգծում են, որ շնչեղությունը այս դեպքում հանդիսանում է միայն հավելյալ հատկանիշ: Հաշվի՝ առնելով հնչույթային հնարավոր տարբերակները, ըստ նշարանց, հնդեվրոպական պայթականների համակարգը ունենում է հետևյալ տեսքը.

(p')	bh/b	ph/p
t'	dh/d	th/t
k'	gh/g	kh/k

Այս համակարգը հիշյալ լեզվաբանները ոչ միայն տեսականորեն են վերականգնում, այլև հաստատվում է հ. ե. լեզուների բազմաթիվ փաստերով¹⁴: Հիմնվելով այդ փաստերի, ինչպես նաև հայերենի բարբառային տվյալների վրա, նրանք ցույց են տալիս, որ այդ ձևով վերականգնված հ. ե. համակարգի կատկայնացվածների շարքը հայերենում արտացոլվում է որպես խուլ պայթականներ. հմտտ.՝ հ. ե. *t': հայ. տուն (tun), հ. հնդկ. dātah, հուն. δομος, լատ. domus կամ՝ հ. ե. *k': հայ. կին (kin), գոթ. qin, հ. հնդկ. gna, հուն. γυνή և այլն: Այդ բաղաձայնները թեև դեռևս գրաբարում պահպանում են իրենց կատկայնացված բնույթը (հնչույթային վերափոխված տեսքով), սակայն, արդեն նախահայերենում կատկայնացումը նրանց համար դարձել է հնչույթային հավելյալ հատկանիշ: Նույն կերպ էնենելով հ. ե. պայթականների մյուս շարքերը, ցույց է տրվում, որ հայերենը առավել չափով պահպանել է դրանք և այդպիսով ներկայացնում է հնդեվրոպականից ավելի մոտ վիճակ, քան մյուս ցեղակից լեզուները: Այսպիսով, հայերենի համար ունենում ենք ընդհանուր հնդեվրոպականից թխող հետևյալ համակարգը.

(p'')	bh/b	ph
t'')	dh/d	th
k'')	gh/g	kh ¹⁵

Նույն կերպ, հնչյունական շատ քիչ փոփոխություններով, նախահնդեվրոպականից դուրս է բերվում նաև գերմաներենի պայթականների համակարգը: Մասնավորապես, գերմաներենի համակարգում հ. ե. կատկայնացվածների շարքը անդրադարձվել է որպես խուլ և դեռևս նախագերմանական շրջանում այդ շարքը հավանաբար պահպանվել է որպես կատկայնացված: Դրանց հետքերը պահպանվել են ուշ գերմանական որոշ լեզուների հնչերանգային հատկանիշներում, որպես վանկային հատույթի կոկորդային արտաբերում, ինչպես

¹² H. Hübschmann. Arm. nische Grammatik, Leipzig, 1897, S. 396.

¹³ P. J. Hopper. Glottalized and murmured occlusives in Indo-Europtan Glossa, 1973, 7, p. 143.

¹⁴ Т. В. Гамкрелидзе. В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984, т. I, с. 21—78.

¹⁵ Նույն տեղում, էջ 41—45:

դան. stōd «հրել, հրում» կամ իսլ. va'tn «չուր»: Գերմանական լեզուների տվյալներից էլնելով, կարելի է նաև եզրակացնել, որ երկու խուլ պայթյալականների (8-րդ շարք) հերթագայության մեջ առաջինը ներկայանում է որպես շնչեղ, իսկ երկրորդը՝ պարզ: Օրինակ՝ հմմտ. հ. բ. գերմ. nift «գարսիկ», լատ. neptis «թոռնիկ» կամ գոթ. stairno «աստղ», լատ. siella, հուն. astēr, հայ. ast: Սակայն բազմաթիվ գերմանական արմատներում (թե՛ սկզբում և թե՛ վերջում) հանդես են գալիս խուլ պայթյալականների շնչեղ տարբերակներ, ինչպես՝ գոթ. frapi «իմաստ, հասկացություն», իսկ լատ. prōtas, որը կարելի է համարել հետագա համաբանական զարգացման արդյունք: Այնպես որ, եթե ենթադրենք, թե 2-րդ և 3-րդ շարքերի՝ հիմնական հնչույթային տարբերակը եղել է շնչեղ, ապա հեշտ է բացատրվում գերմանական լեզուներում դրանց հետագա անցումը շփականների: Այսպիսով, գերմանական լեզուների փաստերի քննությունը հանգեցնում է պայթյալականների հետևյալ համակարգի վերականգնմանը.

(p)	b/β	f
t	d/ð	θ
k	g/γ	h
k ^w	g ^w /γ ^w	h ^w ¹⁶

Վերը ներկայացված վերլուծություննից հետևում է, որ թե՛ հայերենում և թե՛ գերմանական լեզուներում բաղաձայնների տեղաշարժ տեղի չի ունեցել, և այդ լեզուները իրենցից ներկայացնում են ընդհանուր հնդեվրոպականին ավելի մոտ վիճակ, քան սամակրիտը, հունարենը կամ մյուս ցեղակից լեզուները:

Այժմ փորձենք քննել այս տեսակետը, էլնելով դեռևս երիտքերականների կողմից այդ երևույթի էության բացահայտման համար առաջ քաշված հարցադրումներից:

Ինչ խոսք, նշված տեսությունը, ինչպես և ավանդական հնդեվրոպաբանության շատ այլ տեսակետներ, զերծ չէ թերություններից և քննվող խնդրի վերաբերյալ որոշ հարցեր (հարթությունի օրենքի գործողության, ինչպես նաև կատկայնացվածների բաշխման իրական պայմանները և այլն) սպառիչ պատասխան չեն ստանում: Այդուհանդերձ, շատ կարևոր հարցադրումների մեջ հնարավոր է լինում որոշակի պարզություն մտցնել:

Նշենք, որ ավանդական հնդեվրոպաբանությունը, ի դեմս Մ.՝ Բաքի, Ի. Դյակոնովի, Գ. Զահուկյանի և հատկապես Օ. Սեմերենիի, այս տեսության դեմ բերում է մի շարք փաստարկներ: Այդ փաստարկներից մեկն այն է, որ թեև նախնական *b-ն սկզբնական դիրքում հազվադեպ է հանդիպում, սակայն, բառամիջում նրա առկայությունը անժխտելի է, և այդքանն էլ բավական է, որ այն մտնի նախնական հ. ե. պաթյալականների համակարգի մեջ: Սա նշանակում է, որ այդպիսով մերժվում է տվյալ տեսության հենակետերից մեկը: Սակայն, տիպաբանության տեսակետից բառամիջյան մի՝ քանի *b հնչույթների առկայությունը այդքան էլ կարևոր չէ, եթե նկատի ունենանք Հոպերի այն կարևոր բնորոշումը, որ ավանդական պարզ ձայնեղները բառակազմական ածանցների կազմում չեն հանդիպում¹⁷: Ասվածը բնորոշ չէ այն պարզ ձայնեղներին, որոնք հանդիպում են բնական լեզուներում, այն դեպքում, երբ կատկայնացվածների առկայությունը նշված իրադրությունում կասկած չի հարույցում: Հիշյալ տեսությամբ պարզաբանվում է նաև ավանդական հնդեվրոպաբանության այն դրույթը, որ դժվար է հայերենի և գերմաներենի բաղաձայնների տեղաշարժը դիտել որպես ընդհանուր միտում, քանի որ այս փոփոխությունը տեղի է ունեցել այն պահին, երբ այդ լեզուները խոսվել են միմյանցից բավական հեռու տարածքներում: Այն մերժելով տեղաշարժի փաստը ընդհանրապես և նշելով քննվող լեզուներում հ. ե. պայթյալականների պահպանումը, էլնում է ոչ թե հ. ե. լեզուների ներկա տեղաբաշխումից, այլ նրանից, որը գոյություն է ունեցել մ. թ. ա. 5000 տարի առաջ: Իսկ, ինչպես վերը տեսանք, այս տեսությամբ վերականգնված հ. ե. պայթյալականների համակարգը ձեռք է բերել նկատելի կովկասյան գծեր: Եվ եթե, համաձայն այս դրույթի, ընդունում ենք, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գրավել է Փոքր Ասիայի կենտրոնից մինչև Պարսից սարահարթ ընկած տարածքը, որտեղ նրանք շփման մեջ են եղել կովկասյան լեզուների կրողների հետ (ինչպես նաև սեմական լեզուները կրողների հետ, ուր նույնպես հանդիպում են կատկայնացվածներ), ապա հեշտ է բացատրվում հետագայում այդ տարածքը թողած գերմաներենի այնքան մեծ տարբերությունները հայերենից, որը տեղափոխություն համարյա չի կատարել: Ի դեպ, մենք ի տարբերություն Գամկրելիձեի և Իվանովի, հակված չենք ընդունելու գերմանական ու պալեոնաբազային լեզուների կրողների դեպի Միջին Ասիա և ապա միայն Եվրոպա տեղափոխման ուղղության հետ: Ավելի հավանական է թվում նրանց անցումը

¹⁶ Նույն տեղում, էջ 89:

¹⁷ J. P. Hopper, *Glottalized...*, p. 141

Բալկանյան թերակղզով դեպի Եվրոպայ՝ Ռոպես ասվածի ապացույց կարելի է համարել այն հանգամանքը, որ ըստ հ. Ե. լեզուների centum և satem խմբերի տարբերակման, գերմաներենն իր առանձնահատկություններով մոտ է centum խմբի (հունարեն, ռոմանական լեզուներ և այլն) բարբառներին: Սա էլ վկայում է այն մասին, որ գերմանական լեզուների կրողները հ. Ե. միասնությունից անջատվելուց հետո, մինչև իրենց հիմնական բնակության վայր տեղափոխվելը տևական շփման մեջ են եղել հ. Ե. այդ լեզուների կրողների հետ (հավանաբար հիմնականում Փոքր Ասիայի արևմտյան և Բալկանյան թերակղզու հյուսիսարևելյան տարածքներում)¹⁸: Հայերենի և գերմանական լեզուների տարբերություններն, անշուշտ, ընդհանուր մայր լեզվից անջատվելուց հետո տարբեր պայմաններում նրանց ինքնուրույն զարգացման արդյունք են: Իսկ հայերենի առավել պահպանողականությունը պետք է բացատրել այն հանգամանքով, որ հայերենը նախալեզվից հավանաբար ավելի վաղ է անջատվել, քան նրա մյուս հ. Ե. ցեղակիցները: Միևնույն ժամանակ հայերենի և հունարենի նմանությունները, մեր կարծիքով, արդյունք են այն բանի, որ անջատվելուց հետո՝ մինչև հույների Բալկանյան թերակղզի տեղափոխվելը, այդ ժողովուրդները երկար ժամանակ գոյակցել են նույն տարածքում: Ապացուցելի չէ նաև այն, որ հայերենի բառապաշարը շատ է հեռացել ընդհանուր հնդեվրոպականից, ինչպես նշում է Ա. Մելեն, քանի որ ավանդական հնդեվրոպաբանությունը հ. Ե. մայր լեզուն վերականգնում է հիմնականում ըստ ավելի վաղ վկայված լեզուների (սանսկրիտ, հունարեն) տվյալների: Իսկ միայն այդ չափանիշից էլ ներկույժ, ճշգրիտ վերականգնում հնարավոր չէ, քանի որ հաճախ ավելի ուշ վկայված լեզուների (այդ թվում նաև հայերենի) փաստերով է, որ հնարավոր է լինում վերականգնել շատ հ. Ե. նախնական ձևեր: Նշենք, որ կատկանացվածների տեսությամբ թերևս հեշտ է բացատրվում նաև հայերենի ծ, ձ, ց առամնայինների զարգացումը, ինչպես՝ հ. Ե. *k'ep > հայ. ծից (cin) կամ հ. Ե. *k'er > հայ. ծեր (cer) և այլն:

Ընդհանուր առմամբ պետք է նկատի ունենալ, որ կոնկրետ լեզվի հնչյունական զարգացումը ներքին և արտաքին գործոնների բարդ փոխհարաբերության հետևանք է: Ներքին գործոնների թվին են պատկանում երեք գործընթացներ, որոնք ներկայացվել են Պրագայի լեզվաբանական գաղտնի կողմից. հնչույթավորում, ապահնչույթավորում և հնչույթային հաճակարգի տարրերի վերամիավորում: Ինչ վերաբերում է արտաքին գործոններին, ապա այստեղ նկատի են առնվում. 1) մեկ լեզվի հնչյունների ներթափանցումը մյուսի մեջ որպես երկու ցեղակից (երբեմն նաև ոչ ցեղակից) լեզուների անմիջական շփման արդյունք: 2) Գրական լեզվի և բարբառների հնչույթային համակարգերի փոխազդեցությունը, որը երբեմն հանգեցնում է այն բանին, որ նրանցից մեկը ծածկում է մյուսին կամ էլ ստեղծվում է համատեղ գոյակցող հնչույթային ենթահամակարգեր: Միևնույն ժամանակ դժվար է առաջնությունը տալ հիշյալ գործոններից որևէ մեկին ու թեև լեզվական համակարգի փոփոխության մեջ կարևոր դերը պատկանում է ներքին գործոնին, սակայն, արտաքին գործոնի ազդեցությունը երբեմն այնքան մեծ է լինում, որ այն ազդելով ծայրամասային ենթահամակարգերի վրա, առաջ է բերում ամբողջ համակարգի փոփոխություն:

Ամփոփելով, նշենք, որ ըստ ժամանակակից հնդեվրոպաբանության տվյալների, ապացուցվում է, որ հայերենի և գերմանական լեզուների բաղաձայնների տեղաշարժ տեղի չի ունեցել: Դրանից հետևում է ավանդական հնդեվրոպաբանության շատ դրույթների վերանայման անհրաժեշտություն: Այդուհանդերձ, մենք չենք ցանկանում «կատկանացվածների տեսությունը» ներկայացնել որպես քննարկված հարցի վերաբերյալ միակ ճշգրիտ տեսակետ, քանի դեռ պատմական լեզվաբանության կողմից ուսումնասիրության բավականաչափ հստակ և հիմնավորված մեթոդներ վերջնականապես չեն մշակվել: Հիշյալ տեսությունը հետաքրքիր է այն առումով, որ հնարավորություն է տալիս բոլորովին նոր ձևով մեկնաբանելու հնդեվրոպաբանության բավականին բարդ ու խճճված հարցերից մեկը:

Ю. М. ГАБРИЕЛЯН—Передвижение индоевропейских смычных согласных в армянском и германских языках.—Статья посвящена одной из важнейших и до сих пор актуальных проблем арменоведения и индоевропеистики. Автор анализируется названное явление в свете новейших исследований в области сравнительной грамматики индоевропейских языков и в сравнении армянского и германских. Основой для анализа служит так называемая теория «глоттализированных», выдвинутая американским языковедом П. Дж. Хоппером.

¹⁸ Թերևս այս հանգամանքով կարելի է բացատրել նաև խեթերենի պրոբլեմը, որը ըստ վերոհիշյալ դասակարգման պատկանում է centum լեզուների թվին: